# «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2015թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

## Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ........ 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ........ 5
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ........ 6
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ........ 7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն ........ 8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ ........ 10

**KPMG Armenia cjsc**
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

**Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա ՓԲԸ**
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Մենք իրականացրել ենք «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

*Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

*Այլ նշում*

Խմբի 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2015թ. մարտի 25-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

KPMG Armenia cjsc

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
26 ապրիլի 2016թ.

| | Ծնթգ. | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 4 | 32,226,144 | 30,869,142 |
| Տոկոսային ծախս | 4 | (15,192,877) | (13,719,166) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **17,033,267** | **17,149,976** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ | 5 | 3,265,417 | 2,903,945 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս | 6 | (1,252,189) | (1,092,127) |
| **Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ** | | **2,013,228** | **1,811,818** |
| Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից | | 3,756 | (515,582) |
| Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից | 7 | 1,487,471 | 2,682,236 |
| Զուտ օգուտ/(վնաս) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից | | 38,634 | (1,186) |
| Այլ գործառնական եկամուտ | 8 | 2,168,927 | 1,652,738 |
| Այլ գործառնական ծախս | 9 | (1,515,316) | (1,134,053) |
| **Գործառնական եկամուտ** | | **21,229,967** | **21,645,947** |
| Արժեզրկումից կորուստներ | 10 | (8,638,025) | (10,803,385) |
| Վնաս հողի և շենքերի վերագնահատումից | | (590,338) | - |
| Աշխատակազմի գծով ծախսեր | | (6,780,965) | (5,905,326) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 11 | (4,862,894) | (4,590,567) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | | **357,745** | **346,669** |
| Շահութահարկի գծով ծախս | 12 | (397,766) | (40,845) |
| **(Վնաս)/շահույթ տարվա համար** | | **(40,021)** | **305,824** |
| **Այլ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի** | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | | | |
| - Իրական արժեքի զուտ փոփոխություն | | (180,446) | (161,615) |
| - Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն | | 30,907 | (949) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | *(149,539)* | *(162,564)* |
| *Հոդվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս* | | | |
| Հողի և շենքերի վերագնահատում | | (319,273) | - |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս* | | *(319,273)* | - |
| **Այլ համապարփակ վնաս տարվա համար՝ առանց շահութահարկի** | | **(468,812)** | **(162,564)** |
| **Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար** | | **(508,833)** | **143,260** |
| (Վնաս)/շահույթ, որը վերագրելի է՝ | | | |
| - Բանկի բաժնետերերին | | (41,689) | 248,391 |
| - Չվերահսկվող բաժնեմասին | | 1,668 | 57,433 |
| **(Վնաս)/շահույթ տարվա համար** | | **(40,021)** | **305,824** |
| **Ընդամենը համապարփակ վնաս/(եկամուտ), որը վերագրելի է՝** | | | |
| - Բանկի բաժնետերերին | | (510,501) | 85,827 |
| - Չվերահսկվող բաժնեմասին | | 1,668 | 57,433 |
| ***Ընդամենը համապարփակ վնաս/(եկամուտ) տարվա համար*** | | ***(508,833)*** | ***143,260*** |

5-ից 74-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2016թ. ապրիլի 26-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հակոբ Անդրեասյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Արմեն Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| | Ծնթգ. | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13 | 54,169,788 | 64,569,052 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 14 | - | 149,303 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | | |
| - Խմբի կողմից պահվող | 15 | 17,350,075 | 1,954,062 |
| - Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված | 15 | 2,638,083 | 7,253,389 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 16 | 1,183,304 | 12,984,066 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 17 | 168,358,966 | 175,631,668 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 18 | 9,607,216 | 8,715,323 |
| Ընթացիկ հարկային ակտիվ | | 1,504,741 | 1,179,339 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 19 | 15,278,358 | 15,730,773 |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում | 20 | 243,032 | 276,955 |
| Այլ ակտիվներ | 21 | 2,519,675 | 2,655,292 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **272,853,238** | **291,099,222** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 14 | 51,658 | - |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | 23,339 | 7,528 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | 2,500,627 | 7,007,655 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 22 | 107,606,091 | 99,585,004 |
| Այլ փոխառություններ | 23 | 105,504,099 | 128,156,410 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 12 | 931,511 | 680,098 |
| Այլ պարտավորություններ | 24 | 2,523,785 | 1,369,656 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **219,141,110** | **236,806,351** |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 25 | 30,000,000 | 30,000,000 |
| Հողի և շենքերի վերագնահատումից աճ | | 2,990,119 | 3,888,683 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | | 427,278 | 576,817 |
| Չբաշխված շահույթ | | 18,816,669 | 18,279,067 |
| **Բանկի բաժնետերերին վերագրելի ընդամենը կապիտալ** | | **52,234,066** | **52,744,567** |
| Չվերահսկվող բաժնեմաս | | 1,478,062 | 1,548,304 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **53,712,128** | **54,292,871** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **272,853,238** | **291,099,222** |

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| | Ծնթգ. | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Ստացված տոկոսներ | | 31,914,355 | 29,722,378 |
| Վճարված տոկոսներ | | (15,596,891) | (13,719,166) |
| Ստացված կոմիսիոն և այլ վճարներ | | 3,265,417 | 2,903,945 |
| Վճարված կոմիսիոն և այլ վճարներ | | (1,252,189) | (1,092,127) |
| Զուտ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով | | 3,756 | 23,137 |
| Զուտ մուտքեր/(վճարումներ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով | | 38,634 | (1,186) |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | | 1,336,147 | 1,335,598 |
| Զուտ այլ ստացված գործառնական եկամուտ | | 720,364 | 791,939 |
| Այլ գործառնական ծախսերի գծով ճարումներ | | (9,945,364) | (8,812,534) |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | | 200,961 | (712,157) |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | | 11,575,646 | (732,120) |
| Հաճախորդներին տրված վարկեր | | 263,451 | (11,342,873) |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | | (1,069,946) | (1,111,515) |
| Այլ ակտիվներ | | 55,613 | (181,628) |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | 15,811 | 4,944 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | (4,507,028) | 7,007,655 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | 8,292,065 | 6,210,207 |
| Այլ պարտավորություններ | | 449,946 | (17,348) |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը** | | **25,760,748** | **10,277,149** |
| Վճարված շահութահարկ | | (354,552) | (1,789,689) |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր** | | **25,406,196** | **8,487,460** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում | | (12,480,637) | (4,413,144) |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառք և մարում | | 1,699,099 | 2,512,260 |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (1,578,736) | (1,401,906) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք | | - | 37,940 |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | | **(12,360,274)** | **(3,264,850)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Ստացված այլ փոխառություններ | | 22,556,064 | 30,710,462 |
| Այլ փոխառությունների մարում | | (45,886,159) | (40,506,660) |
| Վճարված շահաբաժիններ | | (71,910) | - |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | | **(23,402,005)** | **(9,796,198)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում** | | **(10,356,083)** | **(4,573,588)** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (43,181) | 6,354,758 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | | 64,569,052 | 62,787,882 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | 13 | **54,169,788** | **64,569,052** |

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Բանկի բաժնետերերին վերագրելի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Բաժնետիրական կապիտալ | Հողի և շենքերի վերագնահատումից աճ | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը սեփական կապիտալ |
| Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | 30,000,000 | 3,927,426 | 739,381 | 17,991,933 | 52,658,740 | 1,490,871 | 54,149,611 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | - | 248,391 | 248,391 | 57,433 | 305,824 |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | | | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն` առանց հետաձգված հարկի | - | - | (161,615) | - | (161,615) | - | (161,615) |
| Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն` առանց հետաձգված հարկի | - | - | (949) | - | (949) | - | (949) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | *-* | *-* | *(162,564)* | *-* | *(162,564)* | *-* | *(162,564)* |
| Ընդամենը այլ համապարփակ եկամուտ | - | - | (162,564) | - | (162,564) | - | (162,564) |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **-** | **-** | **(162,564)** | **248,391** | **85,827** | **57,433** | **143,260** |
| Փոխանցում վերագնահատումից աճից չբաշխված շահույթ | - | (38,743) | - | 38,743 | - | - | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **30,000,000** | **3,888,683** | **576,817** | **18,279,067** | **52,744,567** | **1,548,304** | **54,292,871** |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Բանկի բաժնետերերին վերագրելի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Բաժնետիրական կապիտալ | Հողի և շենքերի վերագնահատումից աճ | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը սեփական կապիտալ |
| Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. | 30,000,000 | 3,888,683 | 576,817 | 18,279,067 | 52,744,567 | 1,548,304 | 54,292,871 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | | | | |
| Վնաս տարվա համար | - | - | - | (41,689) | (41,689) | 1,668 | (40,021) |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | | | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | (180,446) | - | (180,446) | - | (180,446) |
| Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | 30,907 | - | 30,907 | - | 30,907 |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | - | - | *(149,539)* | - | *(149,539)* | - | *(149,539)* |
| *Հոդվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս* | | | | | | | |
| Հողի և շենքերի վերագնահատում՝ առանց հետաձգված հարկի | - | (319,273) | - | - | (319,273) | - | (319,273) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս* | - | *(319,273)* | - | - | *(319,273)* | - | *(319,273)* |
| Ընդամենը այլ համապարփակ վնաս | - | (319,273) | (149,539) | - | (468,812) | - | (468,812) |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | **-** | **(319,273)** | **(149,539)** | **(41,689)** | **(510,501)** | **1,668** | **(508,833)** |
| **Գործառնություններ սեփականատերերի հետ** | | | | | | | |
| Հայտարարված շահաբաժիններ | - | - | - | - | - | (71,910) | (71,910) |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **(71,910)** | **(71,910)** |
| Փոխանցում վերագնահատումից աճից չբաշխված շահույթ | - | (579,291) | - | 579,291 | - | - | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **30,000,000** | **2,990,119** | **427,278** | **18,816,669** | **52,234,066** | **1,478,062** | **53,712,128** |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# 1. Ներածություն

## (ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի («Բանկ») և վերջինիս դուստր կազմակերպությունների (միասին՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

Բանկի հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես կոոպերատիվ բանկ կոլեկտիվ սեփականության հիմունքներով 1995թ-ին և վերակազմակերպվել է փակ բաժնետիրական ընկերություն 2006թ-ին: Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Բայրոնի փ. 1:

Բանկն ունի 56 մասնաճյուղ և գլխամասային գրասենյակ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Բանկի հիմնական դուստր կազմակերպությունն է.

| Անվանումը | Գրանցման երկիրը | Հիմնական գործունեությունը | Սեփականություն % 2015թ. | Սեփականություն % 2014թ. |
|---|---|---|---|---|
| «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Վարկային կազմակերպություն | 54% | 54% |

Բանկի խոշոր բաժնետերերն են՝ «Կրեդիտ Ագրիկոլ Էս.Էյ.» (15.56%), Արմավիրի գյուղացիական փոխօգնության մարզային միավորում ոչ պետական կազմակերպություն («ԳՓՄՄ») (14.08%), «Սակամ Ինթերնեյշնլ» (12.44%), Արարատի ԳՓՄՄ (12.28%), Արագածոտնի ԳՓՄՄ (7.4%): Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 31-ում:

## (բ) Հայաստանի գործարար միջավայր

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու հարկային խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

# 2. Պատրաստման հիմունքներ

## (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

## (բ) Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք հաշվառվում են իրական արժեքով, ինչպես նաև հողի ու շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով:

## (գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի և վերջինիս դուստր կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

## (դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Էական անորոշ գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- վարկերի արժեզրկման գնահատում – ծանոթագրություն 17,
- ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ – ծանոթագրություն 18,
- հողի և շենքերի վերագնահատում – ծանոթագրություն 19,
- ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի գնահատում – ծանոթագրություն 32:

# 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

## (ա) Համախմբման հիմունքներ

### *(i) Դուստր կազմակերպություններ*

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող ներդրման օբյեկտներն են: Խումբը վերահսկում է ներդրման օբյեկտը, երբ ենթարկվում է ներդրման օբյեկտում մասնակցությունից ստացվող փոփոխական հատույցների հետ կապված ռիսկերին կամ իրավունք ունի ստանալ այդ հատույցները և հնարավորություն ունի ազդել այդ հատույցների վրա՝ օգտագործելով ներդրման օբյեկտի նկատմամբ ունեցած իր իրավասությունները: Մասնավորապես, Խումբը համախմբում է իր կողմից վերահսկվող ներդրման օբյեկտները ելնելով փաստացի հանգամանքներից: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը:

### *(ii) Ասոցիացված կազմակերպություններ*

Ասոցիացված կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնց նկատմամբ Խումբն ունի նշանակալի ազդեցություն, սակայն չի վերահսկում ֆինանսական և գործառնական քաղաքականությունները: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են ասոցիացված կազմակերպության ընդհանուր ճանաչված օգուտում և վնասում Խմբի մասնաբաժինը բաժնեմասնակցության մեթոդով՝ նշանակալի ազդեցությունը սկսելու պահից մինչև նշանակալի ազդեցության դադարեցումը: Երբ վնասում Խմբի մասնաբաժինը գերազանցում է Խմբի բաժնեմասը (ներառյալ երկարաժամկետ վարկերը) ասոցիացված կազմակերպությունում, բաժնեմասը նվազեցվում է զրոյի և հետագա վնասի ճանաչումը դադարեցվում է, բացառությամբ ասոցիացված կազմակերպության նկատմամբ Խմբի ստանձնած պարտականությունների չափով:

### *(iii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ*

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս բացառվում են ներխմբային հաշվարկների մնացորդները ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված օգուտը: Ասոցիացված կազմակերպությունների հետ իրականացվող գործառնություններից առաջացող չիրացված օգուտը բացառվում է կազմակերպությունում Խմբի ունեցած բաժնեմասի չափով: Ասոցիացված կազմակերպությունների հետ իրականացվող գործառնություններից առաջացող չիրացված օգուտը բացառվում է կազմակերպությունում ունեցած ներդրման դիմաց: Չիրացված վնասը բացառվում է նույն եղանակով, ինչ որ և չիրացված օգուտը, սակայն միայն մինչև այն գումարը, որի համար գոյություն չունի արժեզրկման հայտանիշ:

### *(iv) Գուդվիլ*

Դուստր կազմակերպությունների ձեռքբերումից առաջացող գուդվիլը ներառվում է ոչ նյութական ակտիվներում:

Արժեզրկման ստուգման նպատակով գուդվիլը բաշխվում է դրամաստեղծ միավորներին և հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

### (բ) Չվերահսկվող բաժնեմաս

Չվերահսկող բաժնեմասը դուստր կազմակերպության սեփական կապիտալի այն մասն է, որը, ուղղակիորեն թե անուղղակիորեն, չի վերագրվում Բանկին:

Չվերահսկվող բաժնեմասը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում սեփական կապիտալի հոդվածում՝ Բանկի բաժնետերերին վերագրելի կապիտալից առանձին: Չվերահսկվող բաժնեմասը շահույթում կամ վնասում և ընդամենը համապարփակ եկամտում բացահայտվում է առանձին՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

### (գ) Արտարժույթ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի ընթացքում վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

### (դ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող միջոցները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պահվող նվազագույն պահուստը համարվում է դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված չէ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

## (ե) Ֆինանսական գործիքներ

### *(i) Դասակարգում*

*Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները* իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք`

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Խմբի կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Խումբը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներքին հաշվետվություններով ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Զուտ ստացվելիք դիրքում գտնվող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Զուտ վճարվելիք դիրքում գտնվող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Խումբը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվադեպ հանգամանքներում: Հազվադեպ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

*Վարկերը և դեբիտորական պարտքերը* ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

– որոնք Խումբը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
– որոնք Խումբը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
– որոց Խումբը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
– որոնց գծով Խումբը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

*Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները* ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Խումբը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Խումբը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Խումբը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

*Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն* իրենցից ներկայացնում են այնպիսի ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

## *(ii) Ճանաչում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

## *(iii) Չափում*

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:
Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ դրանց վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

– վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
– մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և

- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

### *(iv) Ամորտիզացված արժեք*

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### *(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ*

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Խումբը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Խումբը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Խումբը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Խումբը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ

վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Խումբը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Խումբը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են այդ փոփոխությունները:

## *(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս*

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

## *(vii) Ապաճանաչում*

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Խմբի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Խումբը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Խումբը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Խումբը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Խումբը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Խումբը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մարման արդյունքում առաջացող օգուտում կամ վնասում:

Խումբը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

## *(viii) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր*

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

## *(ix) Ածանցյալ ֆինանսական գործիքներ*

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են տոկոսադրույքների, արտարժույթների, թանկարժեք մետաղների շուկաների և բորսաների սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, սփոթերը, և օպցիոնները, ինչպես նաև նշված գործիքների ցանկացած համակցությունը:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ կնքվում է ածանցյալ գործիքի պայմանագիրը: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություններ՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Թեև Խումբը զբաղվում է ածանցյալ գործիքների առք ու վաճառքով ռիսկը հեջավորելու նպատակով՝ այս գործիքները չեն բավարարում հեջի հաշվառման պահանջները:

## *(x) Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

## (զ) Վարձակալություն

Խմբի վարձակալական գործառնությունները վարձակալության սկզբում դասակարգվում են ֆինանսական կամ գործառնական վարձակալություն դասերի՝ ՀՀՄՍ 17 *«Վարձակալություն»* ստանդարտի պահանջների համաձայն:

Ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալին է փոխանցում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Սեփականության իրավունքը կարող է ի վերջո փոխանցվել կամ չփոխանցվել: Վարձակալությունը ֆինանսական է, թե գործառնական լինելը կախված է գործառնության էությունից, այլ ոչ՝ պայմանագրի ձևից: Ստորև ներկայացված են այն ցուցանիշները, որոնք կարող են հանգեցնել վարձակալության դասակարգմանը որպես ֆինանսական վարձակալություն:

- վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին փոխանցվում է վարձակալին,
- վարձակալը հնարավորություն ունի տվյալ ակտիվը գնելու այն գնով, որը սպասվում է, որ բավականաչափ ցածր կլինի այդ հնարավորությունն իրագործելու ամսաթվի իրական արժեքից, և եթե վարձակալության սկզբում արդեն կա խելամիտ համոզվածություն, որ այդ հնարավորությունը կիրագործվի,
- վարձակալության ժամկետի մեջ է ներառվում ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը, եթե նույնիսկ սեփականության իրավունքը չի փոխանցվում,
- վարձակալության սկզբում նվազագույն վարձավճարների ներկա արժեքը վարձակալված ակտիվի առնվազն ըստ էության իրական արժեքն է և
- վարձակալված ակտիվների յուրահատուկ բնույթի պատճառով միայն վարձակալն է ի վիճակի դրանք օգտագործել առանց էական ձևափոխությունների:

Որպես վարձատու Խումբը ֆինանսական վարձակալության սկզբնական չափումն իրականացնում է վարձակալությունում զուտ ներդրման մեծությանը հավասար գումարով: Ֆինանսական եկամտի հետագա ճանաչումը հիմնված է մի գրաֆիկի վրա, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում Խմբի զուտ ներդրումների նկատմամբ:

## (է) Հիմնական միջոցներ

### *(i) Սեփական ակտիվներ*

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ հողի և շենքերի, որոնք արտացոլված են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

### *(ii) Վարձակալված ակտիվներ*

Վարձակալությունը, որի դեպքում Խմբին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռքերված սարքավորումները հաշվառվում են իրական արժեքից և վարձակալության սկզբում նվազագույն վարձավճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

### *(iii) Վերագնահատում*

Հողը և շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների շարժից: Երբ հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ հողի և շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

### *(iv) Մաշվածություն*

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| - շենքեր | 20 տարի |
| - վարձակալված գույքի բարելավում | 20 տարի |
| - սարքավորումներ | 5-ից 10 տարի |
| - փոխադրամիջոցներ | 5 տարի |
| - այլ | 5 տարի |

## (ը) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ոչ նյութական ակտիվների գծով հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ ավելացնում են այն առանձին ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են:

Համակարգչային ծարգրերի մշակման կամ սպասարկման հետ կապված ծախսումները ճանաչվում են որպես ծախս կատարվելու ժամանակ:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

## (թ) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Խումբը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկաության դեպքում, Խումբը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի սահմանափակումների կամ պայմանների խախտումները, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար ակտիվ շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, այդ թվում՝ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

## *(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Խումբը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Խումբը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Խումբը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը վարկային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ: Ավելի քան 1 տարի ժամկետանց խոշոր ընկերություններին տրված վարկերի արժեզրկումից կորուստը գրանցվում է առանց կրեդիտագրելու արժեզրկման գծով պահուստը:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք: Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Խումբն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Խումբը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

### *(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

### *(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ*

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

### *(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Գուդվիլի փոխհատուցվող գումարը գումարը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում:

## (ժ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Խումբը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

## (ի) Վարկավորման պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը հանձն է առնում վարկավորման պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածություններ, ակրեդիտիվներ և երաշխիքներ, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Խմբին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտապանն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունը սկզբնական ճանաչումը կատարվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկավորման այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և վարկավորման այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկավորման պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկավորման պարտավորվածություններ, որոնք Խումբը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Խումբն ունի իր վարկավորման պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին

պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկավորման պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,

– վարկավորման պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
– շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

## (ը) Բաժնետիրական կապիտալ

### *(i) Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

### *(ii) Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Խմբի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

## (խ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ հարկային նպատակների հետ չնվազեցվող գուդվիլ, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա, ժամանակավոր տարբերություններ, որոնք վերաբերում են այն դուստր կազմակերպություններում կատարված ներդրումներին, որտեղ մայր կազմակերպությունը հնարավորություն ունի վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձման ժամկետները և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Խումբը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

## (ծ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսումների հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում ենք շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժանելի մաս՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

## (կ) Համադրելի տեղեկատվություն

Համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է հաշվետու տարվա ներկայացման փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

2015թ-ին Խումբը փոփոխություն է կատարել իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության ներկայացման համար անուղղակի մեթոդի փոխարեն ուղղակի մեթոդն կիրառելու նպատակով: Ղեկավարությունը գտնում է, որ ուղղակի մեթոդը թույլ է տալիս տրամադրել առավել տեղին տեղեկատվություն:

## (h) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

| Նոր կամ փոփոխված ստանդարտ | Պահանջների ամփոփ նկարագիր | Հնարավոր ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա |
|---|---|---|
| ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* | 2014թ. հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում»* ստանդարտի գործող ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը պարունակում է վերանայված ուղեցույցներ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման համար, ներառյալ ֆինանսական ակտիվների արժեզրկման հաշվարկի համար կիրառվող նոր սպասվող վնասի մոդելը, և հեջի ընդհանուր հաշվառմանը վերաբերող նոր պահանջները: Այն ներառում է նաև ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական գործիքների ճանաչման և ապաճանաչման ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը կգործի 2018թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ: | Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 9-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: |
| ՖՀՄՍ 16 *«Վարձակալություն»* | ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 *«Վարձակալություն»*, ՖՀՄՍՄԿ մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՍՄԿ մեկնաբանություն 15 *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՍՄԿ մեկնաբանություն 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»* սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները: Այս ստանդարտով այլևս չի կիրառվում հաշվառման կրկնակի մոդելը վարձակալների համար, որով տարանջատվում են հաշվեկշռային ֆինանսական վարձակալությունը և արտահաշվեկշռային գործառնական վարձակալությունը: Փոխարենը, կիրառվում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել, որը նման է ներկայիս ֆինանսական վարձակալության հաշվառմանը: Վարձատուների համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, նրանք շարունակում են դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի: ՖՀՄՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ նաև ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ»* ստանդարտը կիրառելու պայմանով: | Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: |
| Տարբեր *«ՖՀՄՍ-ների կատարելագործումներ»* | Տարբեր *«ՖՀՄՍ-ների կատարելագործումները»* դիտարկվել են առանձին՝ ըստ յուրաքանչյուր ստանդարտի: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխություններին, կգործեն 2016թ. հունվարի 1-ից ոչ շուտ: | Խումբը դեռ չի գնահատել կատարելագործումների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա: |

## 4. Զուտ տոկոսային եկամուտ

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| **Տոկոսային եկամուտ** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 29,582,324 | 28,737,100 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 1,362,762 | 699,325 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 1,003,883 | 949,899 |
| Այլ | 277,175 | 482,818 |
| | 32,226,144 | 30,869,142 |
| **Տոկոսային ծախս** | | |
| Այլ փոխառություններ | 9,231,228 | 9,155,876 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 4,740,811 | 4,338,911 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 1,138,253 | 81,392 |
| Այլ | 82,585 | 142,987 |
| | 15,192,877 | 13,719,166 |

2015թ. տոկոսային եկամտի տարբեր հոդվածների կազմում ներառված է արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով հաշվեգրված 1,703,118 հազար դրամ գումարը (2014թ-ին՝ 1,730,924 հազար դրամ):

## 5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Վարկային քարտերի սպասարկում | 1,740,463 | 1,556,243 |
| Դրամային փոխանցումներ | 528,504 | 516,608 |
| Դրամական միջոցների կանխիկացման ծառայություններ | 154,995 | 140,945 |
| Հաշիվների սպասարկում | 409,193 | 389,706 |
| Այլ | 432,262 | 300,443 |
| | 3,265,417 | 2,903,945 |

## 6. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Վարկային քարտերի սպասարկում | 987,229 | 882,011 |
| Այլ | 264,960 | 210,116 |
| | 1,252,189 | 1,092,127 |

## 7. Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Զուտ օգուտ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից | 1,336,147 | 1,335,598 |
| Զուտ օգուտ արտարժույթի վերագնահատումից | 151,324 | 1,346,638 |
| | 1,487,471 | 2,682,236 |

## 8. Այլ գործառնական եկամուտ

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Ստացված տույժեր և տուգանքներ | 1,875,455 | 1,445,648 |
| Այլ | 293,472 | 207,090 |
| | 2,168,927 | 1,652,738 |

## 9. Այլ գործառնական ծախս

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | 726,284 | 597,476 |
| Վնաս վարձակալված գույքի օտարումից | 146,481 | 68,658 |
| Դրամական միջոցների հավաքագրման ծախսեր | 117,597 | 123,221 |
| Վճարված տույժեր և տուգանքներ | 59,038 | 2,395 |
| Վնաս ասոցիացված կազմակերպության գործառնություններից | 41,749 | 108,457 |
| Զուտ այլ ծախսեր | 424,167 | 233,846 |
| | 1,515,316 | 1,134,053 |

## 10. Արժեզրկումից կորուստներ

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր | 8,433,246 | 10,751,412 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 173,570 | 20,421 |
| Այլ ակտիվներ | 31,209 | 31,552 |
| | 8,638,025 | 10,803,385 |

## 11. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Մաշվածություն և ամորտիզացիա | 1,628,178 | 1,683,359 |
| Վերանորոգման և պահպանման ծախսեր | 590,338 | 520,246 |
| Գովազդի և շուկայավարման ծախսեր | 564,014 | 634,134 |
| Գործառնական վարձակալության գծով ծախս | 412,572 | 338,206 |
| Անվտանգության ծառայություն | 305,717 | 282,623 |
| Կապի ծառայություններ | 294,128 | 271,613 |
| Կոմունալ և գրասենյակային ծախսեր | 253,446 | 181,801 |
| Բարեգործություն | 224,465 | 83,434 |
| Ներկայացուցչական ծախսեր | 132,948 | 91,612 |
| Ապահովագրություն | 126,163 | 118,994 |
| Այլ | 330,925 | 384,545 |
| | 4,862,894 | 4,590,567 |

## 12. Շահութահարկի գծով ծախս

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս | 29,150 | 70,073 |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձում | 368,616 | (29,228) |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | **397,766** | **40,845** |

2015թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2014թ-ին՝ 20%):

### Գործող հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | 2015թ.<br>հազ. դրամ | % | 2014թ.<br>հազ. դրամ | % |
|---|---|---|---|---|
| Շահույթ նախքան շահութահարկով հարկումը | 357,745 | | 346,669 | |
| Շահութահարկի հաշվարկ՝ կիրառելի հարկային դրույքով | 71,549 | 20% | 69,334 | 20% |
| Չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ) | 326,217 | 91% | (28,489) | (8%) |
| | 397,766 | 111% | 40,845 | 12% |

## (ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունները առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: Հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջան փոխանցելու իրավունքի ժամկետը լրանում է 2019-թ-ին:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2015թ. և 2014թ. ընթացքում:

| 2015թ.<br>հազ. դրամ | Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված | Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ. |
|---|---|---|---|---|
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | (142,746) | 497 | 37,385 | (104,864) |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | 23,009 | (23,009) | - | - |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | (64,082) | 43,540 | - | (20,542) |
| Հաճախորդներին տրված վարկեր | (579,726) | (225,299) | - | (805,025) |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 4,620 | (49,963) | - | (45,343) |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | (646,273) | 235,191 | 79,818 | (331,264) |
| Այլ փոխառություններ | (1,136) | (73,531) | - | (74,667) |
| Այլ պարտավորություններ | 21,173 | 9,591 | - | 30,764 |
| Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս | 705,063 | (285,633) | - | 419,430 |
| | (680,098) | (368,616) | 117,203 | (931,511) |

| 2014թ.<br>հազ. դրամ | Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված | Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ. |
|---|---|---|---|---|
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | (183,572) | - | 40,826 | (142,746) |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում | - | 23,193 | (184) | 23,009 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | (64,385) | 303 | - | (64,082) |
| Հաճախորդներին տրված վարկեր | 83,500 | (663,226) | - | (579,726) |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 7,251 | (2,631) | - | 4,620 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | (698,798) | 52,525 | - | (646,273) |
| Այլ փոխառություններ | 55,732 | (56,868) | - | (1,136) |
| Այլ պարտավորություններ | 50,304 | (29,131) | - | 21,173 |
| Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս | - | 705,063 | - | 705,063 |
| | (749,968) | 29,228 | 40,642 | (680,098) |

### (բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող հարկային հետևանքները 2015թ. և 2014թ. համար:

| | 2015թ. | | | 2014թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Գումարը մինչև հարկումը | Հարկի գծով փոխհատուցում | Գումարը հարկումից հետո | Գումարը մինչև հարկումը | Հարկի գծով փոխհատուցում | Գումարը հարկումից հետո |
| Հողի և շենքերի վերագնահատում | (399,091) | 79,818 | (319,273) | - | - | - |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն | (186,923) | 37,385 | (149,538) | (203,206) | 40,642 | (162,564) |

# 13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Կանխիկը դրամարկղում** | 10,848,358 | 9,645,111 |
| **Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում** | 30,978,385 | 42,970,695 |
| **Նոստրո հաշիվներ այլ բանկերում** | | |
| - Ա- -ից Ա+ վարկանիշով | 9,503,149 | 3,566,801 |
| - ԲԲԲ-ից to ԲԲԲ+ վարկանիշով | 2,638,566 | 5,097,389 |
| - ԲԲ- -ից to ԲԲ+ վարկանիշով | 120,076 | 359,815 |
| - Բ+ -ից ցածր վարկանիշով | 6,106 | 10,113 |
| - առանց վարկանիշի | 75,148 | 68,884 |
| **Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում** | 12,343,045 | 9,103,002 |
| **Դրամական միջոցների համարժեքներ** | | |
| Ժամկետային ավանդներ այլ բանկերում | | |
| - Ա- -ից Ա+ վարկանիշով | - | 2,850,244 |
| **Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | 54,169,788 | 64,569,052 |

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Վարկերի որակական ցուցանիշները բացահայտելիս` Խումբն օգտագործում է Fitch վարկանիշային գործակալության վարկանիշները:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի պայմանագրային կողմ հանդիսացող որևէ բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2014թ-ին նման բանկ չկար), որի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

# 14. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | | |
| - Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր | - | 149,303 |
| | - | 149,303 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| Ածանցյալ ֆինանսական գործիքներ | | |
| - Տոկոսադրույքի սվոպ | 5,262 | - |
| - Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր | 46,396 | - |
| | 51,658 | - |

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքները:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

## Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր

Ստորև բերվող աղյուսակում, հիմնական արտարժույթների կտրվածքով, ներկայացված են արտարժույթի ֆորվարդային պայմանագրերի գումարները դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ներառյալ միջին կշռված պայմանագրային փոխարժեքը և մինչև մարումը մնացած ժամկետը: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով: Այս դեռևս չկատարված պայմանագրերի գծով չիրացված օգուտը և վնասը, կատարման ենթակա սակայն դեռևս չկատարված պայմանագրերի գծով ստացվելիք և վճարվելիք գումարների հետ մեկտեղ, ճանաչվում են շահույթում կամ վնասում և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կազմում՝ ըստ կիրառելիության:

| | Անվանական գումար | | Միջին կշռված պայմանագրային փոխարժեքներ | |
|---|---|---|---|---|
| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ | 2015թ. | 2014թ. |
| ԱՄՆ դոլարի վաճառք ռուբլու առք | | | | |
| Մինչև 3 ամիս | 227,553 | - | 73.14 | - |
| ԱՄՆ դոլարի վաճառք եվրոյի առք | | | | |
| Մինչև 3 ամիս | 1,586,070 | - | 1.13 | - |
| ԱՄՆ դոլարի առք ՀՀ դրամի վաճառք | | | | |
| Մինչև 3 ամիս | - | 1,187,425 | - | 419.37 |
| | 1,813,623 | 1,187,425 | | |

# 15. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| **Խմբի կողմից պահվող** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| **- Պետական պարտատոմսեր** | | |
| ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր | 16,066,103 | 1,070,416 |
| **- Կորպորատիվ պարտատոմսեր** | | |
| «Միջազգային ֆինանսական կորպորացիա» | 214,920 | - |
| **Բաժնային գործիքներ** | | |
| - Գնանշված բաժնային արժեթղթեր – միջազգային ընկերություններ | 987,840 | 819,828 |
| - Սկզբնական արժեքով հաշվառվող չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ | 81,212 | 63,818 |
| | 17,350,075 | 1,954,062 |
| **Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| **- Պետական պարտատոմսեր** | | |
| ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր | 2,638,083 | 7,034,591 |
| **- Կորպորատիվ պարտատոմսեր** | | |
| Միջազգային ֆինանսական կազմակերպություններ | - | 218,798 |
| | 2,638,083 | 7,253,389 |

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Հետգնման պայմանագրերի շրջանակներում որպես փոխառություն տրամադրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ անձանց, և Խումբը փոխարենը ստանում է դրամական միջոցներ: Պայմանագրային կողմը կարող է վերագրավադրվել կամ վերավաճառվել այս ֆինանսական ակտիվները, եթե Խումբը կատարում է իր բոլոր պարտականությունները, սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի գործողության ավարտին: Խումբը որոշել է, որ պահպանում է այս արժեթղթերի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները, այդ իսկ պատճառով, չի ապաճանաչել դրանք: Այս արժեթղթերը ներկայացվում են որպես «վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված»: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ այդ գրավի ձեռքբերման գինը մարելու պարտականության գծով ճանաչվում է ֆինանսական պարտավորություն և ներառվում է հետգնման պայմանագերի գծով վճարվելիք գումարների կազմում:

Այս գործառնությունները իրականացվում են ստանդարտ վարկավորմանը և արժեթղթերի որպես փոխառություն տրամադրմանը բնորոշ սովորական պայմաններով:

## (ա) Որոշելի իրական արժեք չունեցող ներդրումներ

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը դրամային փոխանցումների և ֆինանսական ծառայությունների ոլորտում: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին տրամադրել վկայություններ դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Բացի այդ, զեղչված դրամական

միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում է իրական արժեքների լայն տիրույթ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի հետ կապված անորոշությամբ:

# 16. Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում** | 510,000 | 510,000 |
| **Վարկեր և փոխատվություններ այլ բանկերում** | | |
| Տաս խոշորագույն հայկական բանկեր | - | 7,590,281 |
| Օտարերկրյա բանկեր | 455,671 | 281,161 |
| Այլ հայկական բանկեր | - | 4,327,984 |
| Կանոնավոր կերպով գնումների պայմանագրեր - արտարժույթով սփոթ գործառնություններ | 1,065 | 89,825 |
| Այլ | 216,568 | 184,815 |
| **Ընդամենը բանկերին տրված վարկեր և փոխատվություններ** | **1,183,304** | **12,984,066** |

Բանկերին տրված վարկերը և փոխատվությունները արժեզրկված կամ ժամկետանց չեն:

ՀՀ ԿԲ-ում պահվող վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոցն իրենից ներկայացնում է ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերի համաձայն հաշվարկվող ոչ տոկոսակիր ավանդ, որից միջոցների ելքագրումը սահմանափակված է:

## (ա) Բանկերին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի բանկերին տրամադրված այնպիսի միջոցներ (2014թ-ին նման միջոցների չկային), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

# 17. Հաճախորդներին տրված վարկեր

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Իրավաբանական անձանց տրված վարկեր** | | |
| Վարկեր խոշոր ընկերություններին | 28,086,506 | 40,649,686 |
| Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին | 24,705,329 | 26,769,665 |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **52,791,835** | **67,419,351** |
| **Անհատներին տրված վարկեր** | | |
| Գյուղատնտեսական վարկեր | 67,251,487 | 62,413,157 |
| Սպառողական վարկեր | 29,408,536 | 33,668,663 |
| Վարկային քարտեր | 13,280,332 | 9,445,719 |
| Հիփոթեքային վարկեր | 6,924,885 | 6,381,905 |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 5,452,064 | 6,385,018 |
| **Ընդամենը անհատներին տրված վարկեր** | **122,317,304** | **118,294,462** |
| **Հաճախորդներին տրված համախառն վարկեր** | **175,109,139** | **185,713,813** |
| Արժեզրկման գծով պահուստ | (6,750,173) | (10,082,145) |
| **Հաճախորդներին տրված զուտ վարկեր** | **168,358,966** | **175,631,668** |

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2015թ. համար:

| | Իրավաբանական անձանց տրված վարկեր հազ. դրամ | Անհատներին տրված վարկեր հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|
| Մնացորդը տարեսկզբի դրությամբ | 8,878,636 | 1,203,509 | 10,082,145 |
| Զուտ ծախս | 5,468,442 | 2,964,804 | 8,433,246 |
| Դուրսգրումներ | (10,782,641) | (982,577) | (11,765,218) |
| **Մնացորդը տարեվերջի դրությամբ** | **3,564,437** | **3,185,736** | **6,750,173** |

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2014թ. համար:

| | Իրավաբանական անձանց տրված վարկեր հազ. դրամ | Անհատներին տրված վարկեր հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|
| Մնացորդը տարեսկզբի դրությամբ | 2,096,434 | 1,070,279 | 3,166,713 |
| Զուտ ծախս | 7,963,780 | 2,787,632 | 10,751,412 |
| Դուրսգրումներ | (1,181,578) | (2,654,402) | (3,835,980) |
| **Մնացորդը տարեվերջի դրությամբ** | **8,878,636** | **1,203,509** | **10,082,145** |

## (ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Համախառն վարկեր | Արժեզրկման պահուստ | Զուտ վարկեր | Համախառն վարկերի արժեզրկման պահուստ |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | % |
| **Իրավաբանական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Վարկեր խոշոր ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 18,352,139 | 183,521 | 18,168,618 | 1.0% |
| Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 5,944,951 | 2,253,668 | 3,691,283 | 37.9% |
| - մինչև 90 օր ժամկետանց | 186,989 | 20,149 | 166,840 | 10.8% |
| - 90 օրից ավել և մինչև 180 օր ժամկետանց | 253,414 | 190,354 | 63,060 | 75.1% |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | 3,349,013 | - | 3,349,013 | 0.0% |
| Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | 9,734,367 | 2,464,171 | 7,270,196 | 25.3% |
| **Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին** | **28,086,506** | **2,647,692** | **25,438,814** | **9.4%** |
| **Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 22,166,803 | 212,554 | 21,954,249 | 1.0% |
| Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 609,238 | 4,506 | 604,732 | 0.7% |
| - մինչև 90 օր ժամկետանց | 784,571 | 198,808 | 585,763 | 25.3% |
| - 90 օրից ավել և մինչև 180 օր ժամկետանց | 589,050 | 74,118 | 514,932 | 12.6% |
| - 180 օրից ավել և մինչև 1 տարի ժամկետանց | 555,667 | 426,759 | 128,908 | 76.8% |
| Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | 2,538,526 | 704,191 | 1,834,335 | 27.7% |
| **Ընդամենը վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին** | **24,705,329** | **916,745** | **23,788,584** | **3.7%** |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **52,791,835** | **3,564,437** | **49,227,398** | **6.8%** |

| | Համախառն վարկեր | Արժեզրկման պահուստ | Զուտ վարկեր | Համախառն վարկերի արժեզրկման պահուստ |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | % |
| Անհատներին տրված վարկեր | | | | |
| Գյուղատնտեսական վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 63,353,267 | 181,212 | 63,172,055 | 0.3% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 170,860 | 52,736 | 118,124 | 30.9% |
| - 31-90 օր ժամկետանց | 2,797,164 | 1,549,499 | 1,247,665 | 55.4% |
| - 91-180 օր ժամկետանց | 837,455 | 626,703 | 210,752 | 74.8% |
| - 181-270 օր ժամկետանց | 92,741 | 84,753 | 7,988 | 91.4% |
| Ընդամենը գյուղատնտեսական վարկեր | 67,251,487 | 2,494,903 | 64,756,584 | 3.7% |
| Սպառողական վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 28,875,344 | 44,291 | 28,831,053 | 0.2% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 188,605 | 23,907 | 164,698 | 12.7% |
| - 31-90 օր ժամկետանց | 162,563 | 77,349 | 85,214 | 47.6% |
| - 91-180 օր ժամկետանց | 109,720 | 85,612 | 24,108 | 78.0% |
| - 181-270 օր ժամկետանց | 72,304 | 67,517 | 4,787 | 93.4% |
| Ընդամենը սպառողական վարկեր | 29,408,536 | 298,676 | 29,109,860 | 1.0% |
| Վարկային քարտեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 12,888,070 | 46,404 | 12,841,666 | 0.4% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 163,739 | 35,796 | 127,943 | 21.9% |
| - 31-90 օր ժամկետանց | 81,597 | 47,358 | 34,239 | 58.0% |
| - 91-180 օր ժամկետանց | 114,299 | 93,975 | 20,324 | 82.2% |
| - 181-270 օր ժամկետանց | 32,627 | 30,752 | 1,875 | 94.3% |
| Ընդամենը վարկային քարտեր | 13,280,332 | 254,285 | 13,026,047 | 1.9% |
| Հիփոթեքային վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 6,783,233 | 53,504 | 6,729,729 | 0.8% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 53,954 | 4,619 | 49,335 | 8.6% |
| - 31-90 օր ժամկետանց | 60,727 | 9,351 | 51,376 | 15.4% |
| - 91-180 օր ժամկետանց | 16,112 | 3,931 | 12,181 | 24.4% |
| - 181-270 օր ժամկետանց | 10,859 | 2,950 | 7,909 | 27.2% |
| Ընդամենը հիփոթեքային վարկեր | 6,924,885 | 74,355 | 6,850,530 | 1.1% |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 5,390,017 | 31,417 | 5,358,600 | 0.6% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 14,564 | 4,249 | 10,315 | 29.2% |
| - 31-90 օր ժամկետանց | 13,365 | 6,125 | 7,240 | 45.8% |
| - 91-180 օր ժամկետանց | 29,656 | 18,133 | 11,523 | 61.1% |
| - 181-270 օր ժամկետանց | 4,462 | 3,593 | 869 | 80.5% |
| Ընդամենը ոսկու գրավադրմամբ վարկեր | 5,452,064 | 63,517 | 5,388,547 | 1.2% |
| Ընդամենը անհատներին տրված վարկեր | 122,317,304 | 3,185,736 | 119,131,568 | 2.6% |
| Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր | 175,109,139 | 6,750,173 | 168,358,966 | 3.9% |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Համախառն վարկեր | Արժեզրկման պահուստ | Զուտ վարկեր | Համախառն վարկերի արժեզրկման պահուստ |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | % |
| **Իրավաբանական անձանց տրված վարկեր** | | | | |
| **Վարկեր խոշոր ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 21,947,070 | 209,918 | 21,737,152 | 1.00% |
| Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 4,370,061 | 2,558,387 | 1,811,674 | 58.5% |
| - մինչև 90 օր ժամկետանց | 7,942,498 | 1,798,200 | 6,144,298 | 22.6% |
| - 90 օրից ավել և մինչև 180 օր ժամկետանց | 343,346 | 190,611 | 152,735 | 55.5% |
| - 180 օրից ավել և մինչև 1 տարի ժամկետանց | 5,430,749 | 2,715,154 | 2,715,595 | 50.0% |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | 615,962 | 326,106 | 289,856 | 52.9% |
| Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | 18,702,616 | 7,588,458 | 11,114,158 | 40.6% |
| **Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին** | **40,649,686** | **7,798,376** | **32,851,310** | **19.2%** |
| **Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 22,861,188 | 226,843 | 22,634,345 | 1.0% |
| Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 1,393,445 | 286,673 | 1,106,772 | 20.6% |
| - մինչև 90 օր ժամկետանց | 985,265 | 101,021 | 884,244 | 10.3% |
| - 90 օրից ավել և մինչև 180 օր ժամկետանց | 924,238 | 265,995 | 658,243 | 28.8% |
| - 180 օրից ավել և մինչև 1 տարի ժամկետանց | 49,884 | 27,830 | 22,054 | 55.8% |
| - ավելի քան 1 տարի ժամկետանց | 555,645 | 171,898 | 383,747 | 30.9% |
| Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | 3,908,477 | 853,417 | 3,055,060 | 21.8% |
| **Ընդամենը վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին** | **26,769,665** | **1,080,260** | **25,689,405** | **4.0%** |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **67,419,351** | **8,878,636** | **58,540,715** | **13.2%** |

| | Համախառն վարկեր | Արժեզրկման պահուստ | Զուտ վարկեր | Համախառն վարկերի արժեզրկման պահուստ |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | % |
| Անհատներին տրված վարկեր | | | | |
| Գյուղատնտեսական վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 60,959,260 | 121,919 | 60,837,341 | 0.2% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 166,388 | 40,445 | 125,943 | 24.3% |
| - 31-90 օր ժամկետանց | 1,089,336 | 419,574 | 669,762 | 38.5% |
| - 91-180 օր ժամկետանց | 155,517 | 70,576 | 84,941 | 45.4% |
| - 181-270 օր ժամկետանց | 42,656 | 26,521 | 16,135 | 62.2% |
| Ընդամենը գյուղատնտեսական վարկեր | 62,413,157 | 679,035 | 61,734,122 | 1.1% |
| Սպառողական վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 33,320,874 | 66,642 | 33,254,232 | 0.2% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 146,363 | 17,818 | 128,545 | 12.2% |
| - 31-90 օր ժամկետանց | 160,670 | 76,006 | 84,664 | 47.3% |
| - 91-180 օր ժամկետանց | 38,230 | 28,054 | 10,176 | 73.4% |
| - 181-270 օր ժամկետանց | 2,526 | 2,300 | 226 | 91.1% |
| Ընդամենը սպառողական վարկեր | 33,668,663 | 190,820 | 33,477,843 | 0.6% |
| Վարկային քարտեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 9,126,161 | 36,505 | 9,089,656 | 0.4% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 125,187 | 27,040 | 98,147 | 21.6% |
| - 31-90 օր ժամկետանց | 152,476 | 72,675 | 79,801 | 47.7% |
| - 91-180 օր ժամկետանց | 40,061 | 31,057 | 9,004 | 77.5% |
| - 181-270 օր ժամկետանց | 1,834 | 1,699 | 135 | 92.6% |
| Ընդամենը վարկային քարտեր | 9,445,719 | 168,976 | 9,276,743 | 1.8% |
| Հիփոթեքային վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 6,177,966 | 49,499 | 6,128,467 | 0.8% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 150,071 | 23,190 | 126,881 | 15.5% |
| - 31-90 օր ժամկետանց | 42,964 | 12,057 | 30,907 | 28.1% |
| - 91-180 օր ժամկետանց | 10,904 | 4,268 | 6,636 | 39.1% |
| Ընդամենը հիփոթեքային վարկեր | 6,381,905 | 89,014 | 6,292,891 | 1.4% |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | 6,300,245 | 37,844 | 6,262,401 | 0.6% |
| - մինչև 30 օր ժամկետանց | 27,467 | 7,888 | 19,579 | 28.7% |
| - 31-90 օր ժամկետանց | 39,430 | 17,984 | 21,446 | 45.6% |
| - 91-180 օր ժամկետանց | 13,135 | 8,078 | 5,057 | 61.5% |
| - 181-270 օր ժամկետանց | 4,741 | 3,870 | 871 | 81.6% |
| Ընդամենը ոսկու գրավադրմամբ վարկեր | 6,385,018 | 75,664 | 6,309,354 | 1.2% |
| Ընդամենը անհատներին տրված վարկեր | 118,294,462 | 1,203,509 | 117,090,953 | 1.0% |
| Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր | 185,713,813 | 10,082,145 | 175,631,668 | 5.4% |

## (բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

### *(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր*

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս` Խումբը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Իրավաբանական անձանց տրված տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս` ղեկավարությունն առաջնորդվում հետևյալ հիմնական ենթադրություններով.

- նախորդ տարիների տարեկան վնասի գործակիցը կազմում է 1%:
- գրավադրված գույքի վաճառքի դեպքում կիրառվում է 10%-ից 80% զեղչ գրավի սկզբնապես գնահատված արժեքի գծով:
- գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 12-ից 36 ամսով:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե, օրինակ, դրամական միջոցների գնահատված հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվի մեկ տոկոսով, ապա իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի գումարը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կաճի 492,274 հազար դրամով (2014թ-ին` 585,407 հազար դրամով):

### *(ii) Անհատներին տրված վարկեր*

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս Խումբը հիմնվում է վարկի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա: Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս ղեկավարությունն առաջնորդվում է այն հիմնական ենթադրությամբ, որ

- վնասի շարժի դրույքները կայուն են և կարող են գնահատվել վերջին 24 ամիսների ընթացքում կրած վնասի շարժի մոդելի հիման վրա:
- ոչ ժամկետանց հիփոթեքային վարկերի գծով կիրառվում է նախորդ տարիների տարեկան վնասի 0.8% գործակիցը:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե, օրինակ, դրամական միջոցների գնահատված հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվի երեք տոկոսով, ապա անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի գումարը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կաճի 3,573,947 հազար դրամով (2014թ-ին` 3,512,729 հազար դրամով):

## (գ) Գրավի և այլ ապահովության վերլուծություն

### *(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր*

Իրավաբանական անձանց տրված վարկերը ենթակա են վարկային գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքայի որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Խումբը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական անձանց տրված վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների (առանց արժեզրկման) բնույթի վերաբերյալ:

| 31 դեկտեմբերի 2015թ.<br>հազ. դրամ | Համախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք |
|---|---|
| *Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր* | |
| Անշարժ գույք | 31,584,705 |
| Ընթացիկ հաշվի մնացորդ՝ առանց ելքագրման սահմանափակման | 4,176,468 |
| Փոխադրամիջոցներ | 328,946 |
| Սարքավորումներ | 571,272 |
| Պաշարներ | 223,200 |
| Կորպորատիվ երաշխիքներ | 981,461 |
| Առանց գրավի | 2,256,815 |
| Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 40,122,867 |
| *Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր* | |
| Անշարժ գույք | 8,564,770 |
| Փոխադրամիջոցներ | 8,169 |
| Սարքավորումներ | 62,400 |
| Պաշարներ | 320,575 |
| Կորպորատիվ երաշխիքներ | 62,440 |
| Առանց գրավի | 86,177 |
| Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | 9,104,531 |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **49,227,398** |

| 31 դեկտեմբերի 2014թ.<br>հազ. դրամ | Համախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք |
|---|---|
| *Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր* | |
| Անշարժ գույք | 34,340,618 |
| Ընթացիկ հաշվի մնացորդ՝ առանց ելքագրման սահմանափակման | 3,874,548 |
| Փոխադրամիջոցներ | 826,976 |
| Սարքավորումներ | 1,632,364 |
| Պաշարներ | 184,106 |
| Կորպորատիվ երաշխիքներ | 530,336 |
| Առանց գրավի | 2,982,549 |
| Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր | 44,371,497 |
| *Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր* | |
| Անշարժ գույք | 13,965,683 |
| Փոխադրամիջոցներ | 14,953 |
| Սարքավորումներ | 56,039 |
| Կորպորատիվ երաշխիքներ | 39,153 |
| Առանց գրավի | 93,390 |
| Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | 14,169,218 |
| **Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր** | **58,540,715** |

Ղեկավարության գնահատմամբ իրավաբանական անձանց տրված ժամկետանց կամ արժեզրկված վարկերի ապահովություն ծառայող գրավի իրական արժեքը ցածր չէ առանձին վարկերի հաշվեկշռային արժեքից:

Խումբն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել հետագա փոփոխությունները արտացոլելու համար: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել համապատասխանում է արժեզրկման գնահատմանը: Անհատներից, այդ թվում ՓՄՁ հաղիսացող վարկառուների բաժնետերերից, ստացված հավաստումները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար: Այդ իսկ պատճառով, նման վարկերը և մասնակիորեն ապահովված վարկերի չապահովված մասերը ներկայացվում են որպես առանց գրավի և ապահովության այլ միջոցների վարկեր:

Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ՝ գրավի արժեքից, և Խմբի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

### *(ii) Անհատներին տրված վարկեր*

Սպառողական վարկերը և վարկային քարտերով տրամադրված օվերդրաֆտները հիմնականում գրավով ապահովված չեն:

Սպառողական վարկերի մոտ 18%-ն ապահովված է անշարժ գույքով, 31%-ն ապահովված է ձեռքբերված սպառողական ապրանքներով և 47%-ը՝ երաշխիքներով:

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Խմբի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ: Հիփոթեքային վարկերի համար ապահովություն հանդիսացող անշարժ գույքի իրական արժեքն առնվազն համապատասխանում է առանձին վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ որոշված արժեքը:

Խմբի քաղաքականության համաձայն՝ ոսկու գրավադրմամբ վարկերը տրամադրվում են առավելագույնը 100% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Գյուղատնտեսական վարկերն ապահովված են անշարժ գույքով կամ վարկառուների խմբի անդամների անհատական երաշխիքներով:

Գրավների իրական արժեքները գնահատվել է վարկերի տրամադրման ամսաթվի դրությամբ և չեն վերանայվել հետագա փոփոխությունները արտացոլելու համար:

### *(iii) Բռնագանձված գրավ*

2015թ. ընթացքում Խումբը ձեռք է բերել որոշակի ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ սեփականության իրավունք ստանալու միջոցով: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձված գրավը ներառում է.

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Ընդամենը բռնագանձված գրավ - անշարժ գույք | 755,841 | 823,942 |

Խմբի քաղաքականության համաձայն՝ այս ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

### (դ) Գրավադրված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 32,891,453 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2014թ-ին՝ 33,789,363 հազար դրամ) ծառայում են որպես գրավ այլ փոխառությունների համար (ծանոթագրություն 23):

### (ե) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Առևտուր | 17,411,469 | 20,828,170 |
| Սննդի և խմիչքի արտադրություն | 10,450,242 | 9,940,530 |
| Էներգետիկայի ոլորտ | 7,623,496 | 7,682,254 |
| Չկնաբուծություն | 1,746,993 | 7,224,512 |
| Սպասարկման ոլորտ | 5,708,007 | 5,782,225 |
| Շինարարություն | 4,986,460 | 6,658,168 |
| Արդյունաբերություն | 1,881,756 | 5,360,275 |
| Տրանսպորտ | 1,780,526 | 2,477,530 |
| Գյուղատնտեսություն | 376,542 | 193,942 |
| Այլ | 826,344 | 1,271,745 |
| Անհատներին տրված վարկեր | 122,317,304 | 118,294,462 |
| | 175,109,139 | 185,713,813 |
| Արժեզրկման գծով պահուստ | (6,750,173) | (10,082,145) |
| | 168,358,966 | 175,631,668 |

### (զ) Վարկային ռիսկին ենթարկվածություն

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի զուտ մնացորդ վարկերի գծով (2014թ-ին նման մնացորդ չկար), որը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը:

### (է) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 26-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

## 18. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Մինչև մեկ տարում | 4,155,544 | 3,634,991 |
| Մեկից հինգ տարում | 7,364,591 | 6,977,468 |
| Ավելի քան հինգ տարում | 96,688 | 75,882 |
| **Նվազագույն վարձավճարներ** | **11,616,823** | **10,688,341** |
| Մինչև մեկ տարում | (793,965) | (777,451) |
| Մեկից հինգ տարում | (942,445) | (1,022,441) |
| Ավելի քան հինգ տարում | (14,346) | (2,553) |
| **Հանած՝ չվաստակած ֆինանսական եկամուտ** | **(1,750,756)** | **(1,802,445)** |
| **Զուտ ներդրում ֆինանսական վարձակալությունում** | **9,866,067** | **8,885,896** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստ | (258,851) | (170,573) |
| **Զուտ ներդրում ֆինանսական վարձակալությունում** | **9,607,216** | **8,715,323** |

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի հաճախորդներ (2014թ-ին նման հաճախորդներ չկային), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ժամկետանց կամ արժեզրկված ընդհանուր գումարները կազմում են 497,503 հազար դրամ (2014թ-ին՝ 441,732 հազար դրամ):

### (ա) Ֆինանսական վարձակալության ժամկետայնություն

Ֆինանսական վարձակալության պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 26-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև ֆինանսական վարձակալության պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

# 19. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Հող և շենքեր | Վարձակալված գույքի բարելավում | Սարքավորումներ | Տնտեսական գույք | Փոխադրա-միջոցներ | Գուդվիլ | Այլ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական/վերագնահատված արժեք** | | | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. | 13,744,639 | 246,539 | 4,570,073 | 2,091,306 | 413,499 | 18,132 | 1,500,472 | 22,584,660 |
| Ավելացումներ | 83,371 | 163,672 | 265,852 | 257,373 | 74,811 | - | 1,345,117 | 2,190,196 |
| Օտարումներ | - | - | (3,775) | (20,906) | (13,223) | - | (906,379) | (944,283) |
| Կուտակվածության մաշվածության փոխբացառում | (3,036,083) | - | - | - | - | - | - | (3,036,083) |
| Վերագնահատում | (989,429) | - | - | - | - | - | - | (989,429) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **9,802,498** | **410,211** | **4,832,150** | **2,327,773** | **475,087** | **18,132** | **1,939,210** | **19,805,061** |
| | | | | | | | | |
| **Մաշվածություն և ամորտիզացիա** | | | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2015թ. | 2,446,834 | 6,627 | 2,012,717 | 1,106,906 | 330,297 | - | 950,506 | 6,853,887 |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | 589,249 | 14,351 | 481,707 | 266,678 | 37,287 | - | 238,906 | 1,628,178 |
| Օտարումներ | - | - | (3,650) | (17,091) | (13,223) | - | (885,315) | (919,279) |
| Կուտակվածության մաշվածության փոխբացառում | (3,036,083) | - | - | - | - | - | - | (3,036,083) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **-** | **20,978** | **2,490,774** | **1,356,493** | **354,361** | **-** | **304,097** | **4,526,703** |
| | | | | | | | | |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2015թ.** | **9,802,498** | **389,233** | **2,341,376** | **971,280** | **120,726** | **18,132** | **1,635,113** | **15,278,358** |

| հազ. դրամ | Հող և շենքեր | Վարձակալված գույքի բարելավում | Սարքավորումներ | Տնտեսական գույք | Փոխադրա-միջոցներ | Գուդվիլ | Այլ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական/վերագնահատված արժեք** | | | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | 13,714,954 | 40,030 | 4,084,643 | 1,698,307 | 381,291 | 18,132 | 1,395,908 | 21,333,265 |
| Ավելացումներ | 74,770 | 206,509 | 553,661 | 403,002 | 40,208 | - | 123,756 | 1,401,906 |
| Օտարումներ | (45,085) | - | (68,231) | (10,003) | (8,000) | - | (19,192) | (150,511) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **13,744,639** | **246,539** | **4,570,073** | **2,091,306** | **413,499** | **-** | **1,500,472** | **22,584,660** |
| **Մաշվածություն և ամորտիզացիա** | | | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | 1,878,724 | 814 | 1,575,212 | 805,401 | 265,854 | - | 741,315 | 5,267,320 |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | 571,699 | 5,813 | 494,746 | 310,731 | 72,231 | - | 228,139 | 1,683,359 |
| Օտարումներ | (3,589) | - | (57,241) | (9,226) | (7,788) | - | (18,948) | (96,792) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **2,446,834** | **6,627** | **2,012,717** | **1,106,906** | **330,297** | **-** | **950,506** | **6,853,887** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **11,297,805** | **239,912** | **2,557,356** | **984,400** | **83,202** | **18,132** | **549,966** | **15,730,773** |

### Վերագնահատված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հողը և շենքերը վերագնահատվել են անկախ լիցենզավորված գնահատողի՝ «Տոսպ» ՍՊԸ-ի կողմից իրականացված գնահատման հիման վրա: Գնահատման համար հիմնականում կիրառվել է շուկայական մոտեցումը, որը հիմնված համադրելի վաճառքների արդյունքների վերլուծության կամ նմանատիպ ակտիվների վաճառքի գների վրա, որոնց արժեքները ճշգրտվել են մինչև 20%-ի չափով գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից:

Հողի և շենքերի իրական արժեքը դասվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ (գործակիցներ):

Եթե վերագնահատում չիրականացվեր, ապա 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի և շենքերի հաշվեկշռային արժեքը կկազմեր 7,791,472 հազար դրամ (2014թ-ին՝ 8,113,577 հազար դրամ):

2015թ. չեն եղել հիմնական միջոցների ձեռքբերմանը կամ շինարարությանը վերաբերող փոխառության ծախսումներ (2014թ-ին նման ծախսումներ չեն եղել):

## 20. Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում

Խումբը բաժնեմաս ունի «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ում՝ տնօրինելով ընկերության բաժնետոմսերի 49%-ը (2014թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ՝ 49%): Խումբը որոշել է, որ ունի նշանակալի ազդեցություն ընկերության նկատմամբ, քանի որ ներկայացուցիչ ունի ներդրման օբյեկտի Խորհրդում:

## 21. Այլ ակտիվներ

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Կանխավճարներ վարձակալված գույքի մատակարարներին | 313,246 | 412,241 |
| Այլ ստացվելիք գումարներ | 783,463 | 498,073 |
| **Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ** | **1,096,709** | **910,314** |
| Բռնագանձված ակտիվներ | 755,841 | 823,942 |
| Կանխավճարներ մատակարարներին | 200,683 | 149,106 |
| Փոքրարժեք միավորներ | 134,391 | 347,521 |
| Վերադարձված վարձակալված գույք | 112,217 | 304,534 |
| Այլ | 219,834 | 119,875 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **1,422,966** | **1,744,978** |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **2,519,675** | **2,655,292** |

## 22. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | | |
| - Անհատներ | 14,285,512 | 12,824,365 |
| - Իրավաբանական անձինք | 16,424,955 | 14,271,215 |
| Ժամկետային ավանդներ | | |
| - Անհատներ | 64,063,244 | 62,492,001 |
| - Իրավաբանական անձինք | 12,832,380 | 9,997,423 |
| Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 107,606,091 | 99,585,004 |

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբում հաճախորդների ավանդների մնացորդները կազմում են 2,151,273 հազարդ դրամ (2014թ-ին՝ 2,577,255 հազար դրամ), որոնք ծառայում են որպես գրավ Խմբի կողմից տրամադրված վարկերի և չճանաչված վարկային գործիքների համար:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի մեկ հաճախորդ (2014թ-ին նման հաճախորդ չկար), որի միջոցների մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 10,603,823 հազար դրամ:

## 23. Այլ փոխառություններ

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից | 71,216,703 | 92,220,629 |
| Փոխառություններ ՀՀ ԿԲ-ից տեղական և միջազգային ծրագրերի համար | 33,633,214 | 35,766,297 |
| Փոխառություններ տեղական ֆինանսական կազմակերպություններից | 654,182 | 169,484 |
| | 105,504,099 | 128,156,410 |

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված 32,891,453 հազար դրամ գումարով վարկերը (2014թ-ին՝ 33,789,363 հազար դրամ) ծառայում են որպես գրավ ՀՀ կառավարությունից և հայկական ֆինանսական կազմակերպություններից ստացված գրավով ապահովված փոխառությունների համար (ծանոթագրություն 17):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի վեց վարկատուներից (2014թ-ին՝ յոթ վարկատուից) ստացված այլ փոխառություններ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 91,385,002 հազար դրամ (2014թ-ին՝ 110,426,774 հազար դրամ):

### Սահմանափակումների խախտում

Բանկի դուստր կազմակերպությունը խախտել է վարկառուներից մեկի հետ կնքված պայմանագրով սահմանված սահմանափակման առավելագույն չափը: Փոխառության հաշվեկշռային արժեքը կազմում է 3,890,399 հազար դրամ: Բացի այդ, սահմանափակման խախտումը հանգեցրել է այլ վարկառուների հետ կնքված պայմանագրերի

սահմանափակումների փոխադարձ խախտմանը: Արդյունքում, միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված 7,908,322 հազար դրամ գումարով փոխառությունը դասվել է «ցպահանջ և մինչև մեկ ամիս» դասում տոկոսադրույքի ճեղքվածքի, իրացվելիության և ժամկետայնության վերլուծությունում:

Այս ֆինանսական հաշվետվությունների հրապարակմանը հաստատման ամսաթվի դրությամբ դուստր կազմակերպությունը ներում է ստացել վարկառուից վերը նշված խախտման հետ կապված:

## 24. Այլ պարտավորություններ

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 1,512,490 | 546,850 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **1,512,490** | **546,850** |
| Վճարվելիք հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | 510,240 | 343,658 |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 341,336 | 271,019 |
| Կանխավճարներ | 159,719 | 208,129 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **1,011,295** | **822,806** |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **2,523,785** | **1,369,656** |

## 25. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

### (ա) Թողարկված կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած էր ուրաքանչյուրը 12,000 հազար դրամ անվանական արժեքով 2,500 սովորական բաժնետոմսից (2014թ-ին՝ 2,500 սովորական բաժնետոմս):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

### (բ) Պահուստների բնույթը և նպատակը

**Հողի և շենքերի վերագնահատումից աճ**

Հողի և շենքերի վերագնահատումից աճը ներառում է հողի և շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը չբաշխված շահույթ մաշվածության փոխանցումից հետո՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

### (գ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

### (դ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

## 26. Ռիսկերի կառավարում

### (ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Խմբի գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը և գործառնական ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Խումբը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են` շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար` սահմանված համապատասխան սահմանաչափերում Խմբի գործունեությունն ապահովելու նպատակով: Ռիսկերի կառավարման բաժնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման բաժնի ղեկավարը ուղղակիորեն հաշվետու է Վարչության նախագահին և անուղղակիորեն` Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը` թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Ռիսկերի, Վարկերի և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով` ստեղծվել է վարկային կոմիտեների հիերարխիա` կախված ռիսկին ենթարկվածության չափից և տեսակից:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Հատուկ ուշադրություն է դարձվում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցման ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական վերլուծությունների իրականացումից, Ռիսկերի կառավարման վարչությունը

վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը ձեռք բերելու համար:

## (բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում, Ռիսկերի, Վարկերի և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Ռիսկերի, Վարկերի և Ակտիվների և պարտավորությունների կառավարման (ԱՊԿԿ) կոմիտեի կողմից՝ Ռիսկերի կառավարման բաժնի առաջարկությունների հիման վրա:

Խումբը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների ժամկետայնության, արտարժույթի դիրքերի հետ կապված, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

### *(i) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Խումբը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

### *Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն*

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների փոփոխությունների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

| հազ. դրամ | Մինչև 3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Ոչ տոկոսակիր | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| 31 դեկտեմբերի 2015թ. | | | | | | | |
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,563,237 | - | - | - | - | 51,606,551 | 54,169,788 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 396,985 | 1,770,835 | 759,018 | 15,963,814 | 28,454 | 1,069,052 | 19,988,158 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | - | - | - | 1,183,304 | 1,183,304 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 15,246,625 | 20,795,661 | 45,456,077 | 81,282,190 | 5,578,413 | - | 168,358,966 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 850,998 | 803,549 | 1,621,746 | 6,250,763 | 80,160 | - | 9,607,216 |
| | 19,057,845 | 23,370,045 | 47,836,841 | 103,496,767 | 5,687,027 | 53,858,907 | 253,307,432 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | - | - | - | - | - | (51,658) | (51,658) |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | - | - | - | - | - | (23,339) | (23,339) |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | (2,500,627) | - | - | - | - | - | (2,500,627) |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | (27,696,338) | (14,670,290) | (26,115,077) | (6,942,708) | (1,471,210) | (30,710,468) | (107,606,091) |
| Այլ փոխառություններ | (36,314,533) | (21,257,203) | (14,472,034) | (31,745,774) | (1,714,555) | - | (105,504,099) |
| | (66,511,498) | (35,927,493) | (40,587,111) | (38,688,482) | (3,185,765) | (30,785,465) | (215,685,814) |
| Զուտ դիրքը | (47,453,653) | (12,557,448) | 7,249,730 | 64,808,285 | 2,501,262 | 23,073,442 | 37,621,618 |

| հազ. դրամ | Մինչև 3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Ոչ տոկոսակիր | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| 31 դեկտեմբերի 2014թ. | | | | | | | |
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 4,557,087 | - | - | - | - | 60,011,965 | 64,569,052 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | - | - | - | - | - | 149,303 | 149,303 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 111,771 | 584,737 | 305,821 | 4,927,312 | 2,394,164 | 883,646 | 9,207,451 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 9,545,625 | 2,421,699 | - | - | - | 1,016,742 | 12,984,066 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 15,930,439 | 16,903,093 | 45,721,043 | 90,842,943 | 6,234,150 | - | 175,631,668 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 817,446 | 650,100 | 1,334,250 | 5,841,538 | 71,989 | - | 8,715,323 |
| | 30,962,368 | 20,559,629 | 47,361,114 | 101,611,793 | 8,700,303 | 62,061,656 | 271,256,863 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | - | - | - | - | - | (7,528) | (7,528) |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | (7,007,655) | - | - | - | - | - | (7,007,655) |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | (25,592,028) | (12,887,165) | (24,575,297) | (9,434,934) | - | (27,095,580) | (99,585,004) |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | (40,600,631) | (23,435,903) | (17,764,799) | (46,255,622) | (99,455) | - | (128,156,410) |
| | (73,200,314) | (36,323,068) | (42,340,096) | (55,690,556) | (99,455) | (27,103,108) | (234,756,597) |
| Ածանցյալ գործիքների ազդեցությունը | (3,562,275) | - | - | 3,562,275 | - | - | - |
| Զուտ դիրքը | (45,800,221) | (15,763,439) | 5,021,018 | 49,483,512 | 8,600,848 | 34,958,548 | 36,500,266 |

*Միջին արդյունավետ տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 2015թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | | 2014թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | | | |
| Նոստրո հաշիվների բանկերում | - | 0.5% | 0.9% | - | 0.2% | 0.9% |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 12.7% | 6.2% | - | 12.7% | 5.8% | - |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | - | - | 7.3% | 3.7% |
| Հաճախորդներին տրված վարկեր | 17.9% | 14.8% | 14.3% | 17.7% | 13.2% | 11.0% |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 15.3% | 10.0% | 9.1% | 15.1% | 10.6% | 10.0% |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 2.5% | - | - | 1.3% | - | - |
| - Ժամկետային ավանդներ | 13.5% | 4.6% | 3.3% | 10.9% | 5.9% | 4.1% |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 9.2% | - | - | 20.0% | - | - |
| Այլ փոխառություններ | 11.0% | 5.1% | 4.9% | 9.4% | 4.8% | 5.2% |

Վերը նշված տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը, բացառությամբ ստորև ներկայացված լողացող դրույքներով այլ փոխառությունները:

| | Արժույթ | Անվանական տոկոսադրույք | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Փոխառություններ ոչ պետական առևտրային կազմակերպություններից | ՀՀ դրամ | ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման դրույք + մարժա | 22,769,256 | 24,787,746 |
| Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպությունից | ԱՄՆ դոլար | Libor + մարժա | 17,102,694 | 25,258,736 |

*Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն*

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխության (վերագնորոշման ռիսկի) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության բոլոր կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2015թ. ու 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ նվազում | 252,005 | 415,506 |
| 100 բկ զուգահեռ աճ | (252,005) | (415,506) |

Ստորև ներկայացվում է սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

| | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|
| | Սեփական կապիտալ<br>հազ. դրամ | Սեփական կապիտալ<br>հազ. դրամ |
| 100 բկ զուգահեռ նվազում | 486,845 | 196,452 |
| 100 բկ զուգահեռ աճ | (486,845) | (196,452) |

## *(ii) Արտարժույթի ռիսկ*

Խումբն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Խումբը հեջավորում է իր ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ՀՀ դրամ հազ. դրամ | ԱՄՆ դոլար հազ. դրամ | Եվրո հազ. դրամ | Այլ արտարժույթ հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 31,022,084 | 13,463,807 | 8,285,169 | 1,398,728 | 54,169,788 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 4,801,335 | 15,186,823 | - | - | 19,988,158 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 510,994 | 537,782 | 27,579 | 106,949 | 1,183,304 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 84,179,658 | 81,596,216 | 2,583,092 | - | 168,358,966 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 2,479,575 | 6,026,758 | 1,100,883 | - | 9,607,216 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 756,500 | 315,836 | 24,373 | - | 1,096,709 |
| **Ընդամենը ակտիվներ** | **123,750,146** | **117,127,222** | **12,021,096** | **1,505,677** | **254,404,141** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 51,658 | - | - | - | 51,658 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 10,965 | 10,788 | 1,586 | - | 23,339 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 2,500,627 | - | - | - | 2,500,627 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 31,473,404 | 62,913,852 | 11,563,886 | 1,654,949 | 107,606,091 |
| Այլ փոխառություններ | 55,643,092 | 48,671,938 | 1,189,069 | - | 105,504,099 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 366,087 | 1,129,939 | 16,464 | - | 1,512,490 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **90,045,833** | **112,726,517** | **12,771,005** | **1,654,949** | **217,198,304** |
| **Զուտ դիրքը** | **33,704,313** | **4,400,705** | **(749,909)** | **(149,272)** | **37,205,837** |
| **Ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունը** | **-** | **(1,813,623)** | **1,586,070** | **227,553** | **-** |
| **Զուտ դիրքը ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունից հետո** | **33,704,313** | **2,587,082** | **836,161** | **78,281** | **37,205,837** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ՀՀ դրամ հազ. դրամ | ԱՄՆ դոլար հազ. դրամ | Եվրո հազ. դրամ | Այլ արտարժույթ հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 33,472,763 | 22,485,768 | 4,647,858 | 3,962,663 | 64,569,052 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 149,303 | - | - | - | 149,303 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 5,235,714 | 3,971,737 | - | - | 9,207,451 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 511,133 | 9,969,740 | 2,408,995 | 94,198 | 12,984,066 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 99,183,196 | 71,894,713 | 4,553,759 | - | 175,631,668 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 1,940,132 | 6,128,544 | 646,647 | - | 8,715,323 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 378,200 | 472,129 | 59,985 | - | 910,314 |
| **Ընդամենը ակտիվներ** | **140,870,441** | **114,922,631** | **12,317,244** | **4,056,861** | **272,167,177** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 2,873 | 2,923 | 1,732 | - | 7,528 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 7,007,655 | - | - | - | 7,007,655 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 28,886,046 | 56,935,211 | 11,980,979 | 1,782,768 | 99,585,004 |
| Այլ փոխառություններ | 59,060,800 | 68,020,538 | 1,075,072 | - | 128,156,410 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 373,176 | 143,974 | 29,700 | - | 546,850 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **95,330,550** | **125,102,646** | **13,087,483** | **1,782,768** | **235,303,447** |
| **Զուտ դիրքը** | **45,539,891** | **(10,180,015)** | **(770,239)** | **2,274,093** | **36,863,730** |
| **Ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունը** | **(1,187,425)** | **1,187,425** | **-** | **-** | **-** |
| **Զուտ դիրքը ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունից հետո** | **44,352,466** | **(8,992,590)** | **(770,239)** | **2,274,093** | **36,863,730** |

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Խումբը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ (2014թ-ին՝ 10%) | 258,708 | (899,259) |
| Եվրոյի փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ (2014թ-ին՝ 10%) | 83,616 | (77,024) |

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Խումբը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ վարկային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկողության ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկերի վերլուծության վարչություն, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական արդյունքների վրա: Այնուհետև, խոշոր վարկերի դիմումները և հաշվետվություններն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից: Վարկային կոմիտեի ուսումնասիրում է վարկային դիմումը Վարկերի վերլուծության և Վարկային ռիսկի կառավարման վարչությունների կողմից ներկայացված նյութերի հիման վրա:

Խումբը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Խմբի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատների վարկավորման բաժնի կողմից՝ գնահատման մշակած մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

| | 2015թ.<br>հազ. դրամ | 2014թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 43,321,430 | 54,923,941 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | - | 149,303 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 18,919,106 | 8,323,805 |
| Բանկերի ն տրված վարկեր և փոխատվություններ | 1,183,304 | 12,984,066 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 168,358,966 | 175,631,668 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 9,607,216 | 8,715,323 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 1,096,709 | 910,314 |
| Վարկային ռիսկին ենթարկվածության ընդհանուր առավելագույն չափը | 242,486,731 | 261,638,420 |

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների, բանկերին տրված վարկերի դիմաց, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործունեության մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 28-ում:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի պարտապաններ կամ կապակցված պարտապանների խմբեր, որոնց հետ կապված վարկային ռիսկը գերազանցում է ընդհանուր վարկային ռիսկի 10%-ը, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի:

**Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում**

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Խմբի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՝ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ քլիրինգային պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման գլխավոր պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության ստացման և տրամադրման պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Խումբը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Խմբի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ համաձայնագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

| Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ | Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար | Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար | Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ: Ֆին. գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ) | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ: Որպես գրավ ստացված դրամական միջոցներ | Զուտ գումար |
|---|---|---|---|---|---|---|
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | (2,500,627) | - | (2,500,627) | 2,500,627 | - | - |
| Այլ փոխառություններ | (105,504,099) | - | (105,504,099) | 32,891,454 | - | (72,612,645) |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **(108,004,726)** | **-** | **(108,004,726)** | **35,392,081** | **-** | **(72,612,645)** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ համաձայնագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

| Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ | Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար | Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար | Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ: Ֆին. գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ) | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ: Որպես գրավ ստացված դրամական միջոցներ | Զուտ գումար |
|---|---|---|---|---|---|---|
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | (7,007,655) | - | (7,007,655) | 7,007,655 | - | - |
| Այլ փոխառություններ | (128,156,410) | - | (128,156,410) | 33,789,363 | - | (94,367,047) |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **(135,164,065)** | | **(135,164,065)** | **40,797,018** | **-** | **(94,367,047)** |

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

## (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Խումբը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է կարճաժամկետ, իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Խմբում:

Ռիսկերի կառավարման վարչությունը վերահսկում է իրացվելիության դիրքն օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես թեսթերը» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների ու վարկավորման պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չզեղչված հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ պարտավորվածությունների գծով: Ֆինանսական երաշխիքների պայմանագրերի համար երաշխիքի առավելագույն գումարը տեղաբաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխիքը կարող է հետ կանչվել:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 51,658 | - | - | - | - | 51,658 | 51,658 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 23,339 | - | - | - | - | 23,339 | 23,339 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 2,502,489 | - | - | - | - | 2,502,489 | 2,500,627 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 46,363,393 | 11,118,609 | 15,253,030 | 26,601,633 | 11,899,380 | 111,236,045 | 107,606,091 |
| Այլ փոխառություններ | 20,526,104 | 4,439,162 | 10,848,093 | 23,802,290 | 60,307,937 | 119,923,586 | 105,504,099 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | 901,030 | - | 611,460 | - | 1,512,490 | 1,512,490 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | 69,466,983 | 16,458,801 | 26,101,123 | 51,015,383 | 72,207,317 | 235,249,607 | 217,198,304 |
| **Վարկավորման պարտավորվածություններ** | 17,975,641 | - | - | - | - | 17,975,641 | 17,975,641 |

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 7,528 | - | - | - | - | 7,528 | 7,528 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 7,024,455 | - | - | - | - | 7,024,455 | 7,007,655 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 39,616,976 | 12,039,254 | 13,517,666 | 25,360,618 | 13,158,601 | 103,693,115 | 99,585,004 |
| Այլ փոխառություններ | 3,877,587 | 5,886,072 | 7,211,137 | 25,483,363 | 100,650,284 | 143,108,443 | 128,156,410 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | 546,850 | - | - | - | 546,850 | 546,850 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | 50,526,546 | 18,472,176 | 20,728,803 | 50,843,981 | 113,808,885 | 254,380,391 | 235,303,447 |
| **Վարկավորման պարտավորվածություններ** | 15,183,954 | - | - | - | - | 15,183,954 | 15,183,954 |

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն` անհատները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները` դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Վերը նշված աղյուսակներում այս ավանդները դասակարգված են ըստ մարման ժամկետների: Ստորև ներկայացված է այս ավանդների դասակարգումը (առանց հաշվեգրված տոկոսների) ըստ մարման ժամկետների:

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով | 8,522,494 | 9,061,170 |
| 1-ից 3 ամիս ժամկետով | 8,810,678 | 8,440,386 |
| 3-ից 12 ամիս ժամկետով | 35,419,265 | 33,222,698 |
| 1-ից 5 տարի ժամկետով | 7,264,257 | 8,944,851 |
| Ավելի քան 5 տարի ժամկետով | 2,930,794 | 1,601,039 |
| | 62,947,488 | 61,270,144 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը` ըստ մարման ակնկալվող ժամկետների:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 54,169,788 | - | - | - | - | - | - | 54,169,788 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | - | 396,985 | 2,529,853 | 15,963,814 | 28,454 | 1,069,052 | - | 19,988,158 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 217,633 | - | - | - | - | 965,671 | - | 1,183,304 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 5,094,928 | 10,151,697 | 66,251,738 | 67,089,740 | 5,578,413 | | 14,192,450 | 168,358,966 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 279,657 | 571,341 | 2,425,295 | 5,803,969 | 80,160 | - | 446,794 | 9,607,216 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | - | - | 1,504,741 | - | - | - | - | 1,504,741 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 15,278,358 | - | 15,278,358 |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում | - | - | - | - | - | 243,032 | - | 243,032 |
| Այլ ակտիվներ | - | 513,929 | 1,003,297 | - | - | 1,002,449 | - | 2,519,675 |
| **Ընդամենը ակտիվներ** | **59,762,006** | **11,633,952** | **73,714,924** | **88,857,523** | **5,687,027** | **18,558,562** | **14,639,244** | **272,853,238** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 51,658 | - | - | - | - | - | - | 51,658 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 23,339 | - | - | - | - | - | - | 23,339 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 2,500,627 | - | - | - | - | - | - | 2,500,627 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 45,992,838 | 10,542,559 | 40,549,001 | 7,591,990 | 2,929,703 | - | - | 107,606,091 |
| Այլ փոխառություններ | 19,523,563 | 4,033,732 | 28,833,672 | 51,398,579 | 1,714,553 | - | - | 105,504,099 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | - | - | - | - | 931,511 | - | 931,511 |
| Այլ պարտավորություններ | - | 1,570,919 | 952,866 | - | - | - | - | 2,523,785 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **68,092,025** | **16,147,210** | **70,335,539** | **58,990,569** | **4,644,256** | **931,511** | | **219,141,110** |
| **Զուտ դիրքը** | **(8,330,019)** | **(4,513,258)** | **3,379,385** | **29,866,954** | **1,042,771** | **17,627,051** | **14,639,244** | **53,712,128** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը` ըստ մարման ակնկալվող ժամկետների:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 64,569,052 | - | - | - | - | - | - | 64,569,052 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | - | 149,303 | - | - | - | - | - | 149,303 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | - | 111,771 | 890,558 | 4,927,312 | 2,394,164 | 883,646 | - | 9,207,451 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 5,069,162 | 4,702,044 | 2,421,699 | - | - | 791,161 | - | 12,984,066 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 5,889,345 | 10,041,094 | 62,624,136 | 82,450,733 | 6,234,150 | - | 8,392,210 | 175,631,668 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ումարներ | 354,021 | 463,425 | 1,984,350 | 5,801,889 | 71,989 | - | 39,649 | 8,715,323 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | - | - | 1,179,339 | - | - | - | - | 1,179,339 |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում | - | - | - | - | - | 15,730,773 | - | 15,730,773 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 276,955 | - | 276,955 |
| Այլ ակտիվներ | - | 561,347 | 644,528 | - | - | 1,449,417 | - | 2,655,292 |
| **Ընդամենը ակտիվներ** | **75,881,580** | **16,028,984** | **69,744,610** | **93,179,934** | **8,700,303** | **19,131,952** | **8,431,859** | **291,099,222** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 7,528 | - | - | - | - | - | - | 7,528 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 7,007,655 | - | - | - | - | - | - | 7,007,655 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 39,240,031 | 11,439,821 | 37,405,992 | 9,898,650 | 1,600,510 | - | - | 99,585,004 |
| Այլ փոխառություններ | 3,847,641 | 5,781,875 | 30,672,408 | 87,755,031 | 99,455 | - | - | 128,156,410 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | - | - | - | - | 680,098 | - | 680,098 |
| Այլ պարտավորություններ | - | 1,098,637 | 271,019 | - | - | - | - | 1,369,656 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **50,102,855** | **18,320,333** | **68,349,419** | **97,653,681** | **1,699,965** | **680,098** | **-** | **236,806,351** |
| **Զուտ դիրքը** | **25,778,725** | **(2,291,349)** | **1,395,191** | **(4,473,747)** | **7,000,338** | **18,451,854** | **8,431,859** | **54,292,871** |

Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշները հաշվետու ամսաքվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

| | 2015թ.<br>Աուդիտ չանցած | 2015թ.<br>Աուդիտ չանցած |
|---|---|---|
| Միջինը դեկտեմբերի համար (աուդիտ չանցած) | 219% | 242% |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չանցած) | 206% | 211% |

Վերը նշված հարաբերակցության ցուցանիշներն օգտագործվում են նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը գնահատելու համար:

# 27. Կապիտալի կառավարում

Խմբի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Խումբը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ առևտրային բանկերի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշի («կապիտալի համարժեքության ցուցանիշ») նվազագույն մակարդակը կազմում էր 12% (2014թ-ին՝ 12%): 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 2015թ.<br>հազ. դրամ<br>Աուդիտ չանցած | 2014թ.<br>հազ. դրամ<br>Աուդիտ չանցած |
|---|---|---|
| **Հիմնական կապիտալ** | | |
| Հիմնական կապիտալ | 45,214,898 | 45,370,250 |
| Նվազեցումներ | (3,285,479) | (3,675,484) |
| **Ընդամենը հիմնական կապիտալ** | 41,929,419 | 41,694,766 |
| | | |
| **Լրացուցիչ կապիտալ** | | |
| Լրացուցիչ կապիտալ | 4,019,989 | 3,615,019 |
| **Ընդամենը լրացուցիչ կապիտալ** | 4,019,989 | 3,615,019 |
| **Ընդամենը կապիտալ** | 45,949,408 | 45,309,785 |
| | | |
| **Ընդամենը ռիսկով կշռված ակտիվները՝ ներառյալ վարկային, շուկայական և գործառնական ռիսկերը** | 277,660,640 | 291,259,618 |
| | | |
| **Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)** | 16.5% | 15.6% |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի, և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

## 28. Վարկավորման պարտավորվածություններ

Խումբն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Խումբը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև մեկ տարի: Խումբը տրամադրում է նաև երաշխիքներ՝ հանդես գալով որպես գործակալ արժեթղթերի որպես փոխառության ստացման և տրամադրման գործառնություններում:

Վարկավորման պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված Խումբը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չիրականացնեն պայմանագրային պարտականությունները:

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Պայմանագրային գումար** | | |
| Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ | 3,127,888 | 1,748,134 |
| Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ | 11,252,926 | 9,778,979 |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 3,594,827 | 3,656,841 |
| | 17,975,641 | 15,183,954 |

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային պարտավորվածությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը: Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածությունների մեծամասնությունն իրենից չի ներկայացնում միանշանակ պարտավորվածություն Խմբի կողմից:

# 29. Գործառնական վարձակալություն

## (ա) Վարձակալություն, որտեղ Խումբը հանդես է գալիս որպես վարձակալ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են.

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Մինչև մեկ տարի ժամկետով | 600,023 | 387,264 |
| Մեկից հինգ տարի ժամկետով | 2,782,450 | 1,533,403 |
| Ավելի քան հինգ տարի ժամկետով | 1,480,139 | 1,391,572 |
| | 4,862,612 | 3,312,239 |

Խումբը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը որպես կանոն կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարների չափը սովորաբար ավելանում է տարեկան կտրվածքով՝ շուկայի միտումներն արտացոլելու նպատակով: Այս վարձակալություններից ոչ մեկը պայմանական վարձավճար չի ներառում:

# 30. Պայմանական դեպքեր

## (ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

## (բ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը շարունակում է զարգանալ և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են պարզաբանումներ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել ֆինանսական վիճակի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

# 31. Գործարքներ կապակցված կողմերի հետ

## (ա) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2015թ. և 2014թ. համար:

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատավարձի գծով ծախս | 474,530 | 310,017 |

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 2015թ. հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | 2014թ. հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | |
| Տրված վարկեր (համախառն) | 374,333 | 2.5% | 390,028 | 3.6% |
| Վարկերի արժեզրկման գծով պահուստ | (3,743) | | (3,900) | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 359,017 | 6.9% | 536,522 | 6.8% |

Վարկերը հիմնականում ենթակա են մարման մինչև 2020թ.: Կապակցված կողմերի հետ իրականացվող գործարքները գրավով ապահովված չեն:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի կազմում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

| | 2015թ. հազ. դրամ | 2014թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Շահույթ կամ վնաս** | | |
| Տոկոսային եկամուտ | 12,040 | 13,818 |
| Տոկոսային ծախս | 31,039 | 36,765 |

## (բ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2015թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

| | Բաժնետերեր | | Բաժնետերերի կողմից վերահսկվող կազմակերպություններ | | Այլ կապակցված կողմեր | |
|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 3,410,070 | 0.5% | 222,776 | - | - | - |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 359,017 | 8.6% | - | - | 131,569 | 5.4% |
| **Շահույթ (վնաս)** | | | | | | |
| Տոկոսային ծախս | 810 | | - | | 7,116 | - |

Ստորև ներկայացված են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2014թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

| | Բաժնետերեր | | Բաժնետերերի կողմից վերահսկվող կազմակերպություններ | | Այլ կապակցված կողմեր | |
|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 4,884,662 | 0.1% | 348,976 | - | | - |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 1,483,800 | 6.9% | - | - | 166,310 | 5.2% |
| **Շահույթ (վնաս)** | | | | | | |
| Տոկոսային ծախս | 76,758 | | - | | 8,708 | |

# 32. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Խումբը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշված բաժնային արժեթղթերի, մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: 81,212 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2014թ-ին՝ 63,818 հազար դրամ) վաճառքի համար մատչելի չգնանշված բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | | | |
| - Ածանցյալ պարտավորություններ | - | (51,658) | (51,658) |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | | |
| - Պարտքային գործիքներ | - | 18,919,106 | 18,919,106 |
| - Բաժնային գործիքներ | 987,840 | - | 987,840 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | | | |
| - Ածանցյալ ակտիվներ | - | 149,303 | 149,303 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | | |
| - Պարտքային գործիքներ | - | 8,323,805 | 8,323,805 |
| - Բաժնային գործիքներ | 819,828 | - | 819,828 |

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի գներ, և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ռիսկից զերծ և ելակետային տոկոսադրույքները, վարկային սպրեդերը և այլ ճշգրտումները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնետոմսերի և բաժնետոմսերի ինդեքսների գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»: